



+Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 40967 գործարքներ, որոնց քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.2%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 38.2%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 15925 օտարման գործարքների 84.4% կազմել են առուվաճառքները, 14.9%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 35.1% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.6% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. երրորդ եռամսյակում, 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 14.9%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 24.3%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.8% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.8%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.2%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>երրորդ եռամսյակ 2006թ.</i>	<i>երրորդ եռամսյակ 2007թ.</i>	<i>երկրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	384200	455100	449400
Արաբկիր	304400	376800	360600
Քանաքեռ-Զեյթուն	185800	280300	261700
Նոր-Նորք	173100	235700	224300
Ավան	160100	230300	209400
Էրեբունի	153800	236500	217300
Շենգավիթ	185900	252100	235500
Դավթաշեն	193100	259100	239900
Աջափնյակ	172900	245800	229500
Մալաթիա-Սեբաստիա	169800	232200	216900
Նուբարաշեն	110900	126700	122300
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>199500</i>	<i>266400</i>	<i>251500</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 5.9%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2007թ. երրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1626 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 10.9%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 8.5%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2006թ.	երրորդ եռամսյակ 2007թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	67600	110100	102300
	Ապարան	26100	28700	28600
	Թալին	25700	38100	35700
Արարատ	Արտաշատ	53700	88000	81600
	Մասիս	61500	100300	88700
	Վեդի	42600	62700	57700
	Արարատ	42500	57700	55400
Արմավիր	Վաղարշապատ	89000	130700	123900
	Արմավիր	60300	97200	86600
	Մեծամոր	39200	62200	56500
Գեղարքունիք	Սևան	38800	65600	58500
	Գավառ	26300	36100	33900
	Մարտունի	38800	53600	49400
	Վարդենիս	21000	26300	26200
	Ճամբարակ	13200	15100	14500
Լոռի	Վանաձոր	53500	75300	69300
	Ստեփանավան	25200	39300	33400
	Մայիսակ	37700	46700	44500
	Ալավերդի	20900	26400	24700
	Տաշիր	20000	26200	24000
	Թումանյան	5300	5400	5400
	Շամլուղ	2900	3000	3000
	Ախթալա	10600	11700	11600
Կոտայք	Աբովյան	101900	150000	140100
	Նոր Հաճն	68600	105900	96200
	Բյուրեղավան	48800	76400	70300
	Եղվարդ	64100	94500	86200
	Հրազդան	38700	53800	48300
	Ծաղկաձոր	74300	100900	90200
	Չարենցավան	44200	64900	58800
Շիրակ	Գյումրի	51300	74000	66500
	Արթիկ	32100	47000	43000
	Մարալիկ	21700	25700	24900
Սյունիք	Գորիս	52500	75100	70000
	Կապան	46100	69900	63100
	Սիսիան	39000	54300	50600
	Մեղրի	30800	39600	36500
	Ագարակ	20200	25300	23700
	Քաջարան	27100	34400	31000
	Դաստակերտ	6600	6900	6800
Վայոց Ձոր	Վայք	39200	62900	56300
	Եղեգնաձոր	60000	79000	70300
	Ջերմուկ	67400	111700	102800
Տավուշ	Դիլիջան	48100	71100	63600
	Իջևան	57700	93500	85900
	Բերդ	30300	34200	33000

	Նոյեմբերյան	20600	28500	27800
	Այրում	18000	20800	18000

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 8.8%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1729 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 466, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1263: 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 13.8%-ով, ընդ որում Երևանում՝ 58.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.1%-ով: 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 27.5%-ով, ընդ որում Երևանում՝ 37.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 24.3%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>		
	<i>երրորդ եռամսյակ 2006թ.</i>	<i>երրորդ եռամսյակ 2007թ.</i>	<i>երկրորդ եռամսյակ 2007թ.</i>
Կենտրոն	391300	471400	458800
Արաբկիր	307100	387700	364400
Քանաքեռ-Զեյթուն	188300	284400	264500
Նորք-Մարաշ	188300	239000	227800
Ավան	161400	235100	212700
Էրեբունի	156100	239900	222600
Շենգավիթ	187100	256600	237900
Դավթաշեն	194900	263300	245500
Աջափնյակ	175200	250300	234000
Մալաթիա-Սեբաստիա	172200	235900	219800
Նուբարաշեն	113000	129900	125400
<i>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</i>	<i>203200</i>	<i>272100</i>	<i>255800</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 6.4 %-ով:

2007թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2006թ.	երրորդ եռամսյակ 2007թ.	երկրորդ եռամսյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	69900	113500	104900
	Ապարան	27800	33300	33100
	Թալին	26700	41100	38800
Արարատ	Արտաշատ	54800	91600	84300
	Մասիս	62800	102800	91800
	Վեդի	43700	65200	61100
Արարատ	Արարատ	43600	62100	59400
	Վաղարշապատ	90300	134600	126500
	Արմավիր	61400	99000	89900
Գեղարքունիք	Սևան	41000	67700	61100
	Գավառ	27500	39700	37700
	Մարտունի	40100	56000	52700
	Վարդենիս	22400	30500	30000
	Ճամբարակ	14700	18400	17300
Լոռի	Վանաձոր	54700	79600	74000
	Ստեփանավան	27200	41600	37700
	Սպիտակ	38600	50100	48800
	Ալավերդի	22000	29900	28800
	Տաշիր	21400	28600	27000
	Թումանյան	6900	8500	8100
	Շամլուղ	4300	5700	5300
	Ախթալա	12100	14900	14100
Կոտայք	Աբովյան	103700	154800	144300
	Նոր Հաճն	69700	110600	102600
	Բյուրեղավան	49900	79000	72800
	Եղվարդ	65200	97600	90000
	Հրազդան	39900	56900	52400
	Ծաղկաձոր	76200	144700	118100
Չիրակ	Չարենցավան	45300	67600	60700
	Գյումրի	52600	78600	70900
	Արթիկ	33200	49400	45500
	Մարալիկ	23700	28700	27500
	Գորիս	54000	78900	72300
	Կապան	47300	72600	65700
Սյունիք	Սիսիան	40000	57200	55100
	Մեղրի	31700	41800	39700
	Ագարակ	21300	27200	26700
	Դաստակերտ	8700	9700	9600
	Վայոց Ձոր	Վայք	40200	64600

	Եղեգնաձոր	61200	81800	72000
	Ջերմուկ	37700	58300	50700
Տավուշ	Դիլիջան	49300	74100	67300
	Իջևան	58800	96400	87400
	Բերդ	31300	37200	36200
	Նոյեմբերյան	21500	32100	30700
	Այրում	19200	22000	19200

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 8.7%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 6266 միավոր /5225.74 հա/ հողեր, որից Երևանում՝ 499 միավոր /82.83 հա/, այդ թվում 22 հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 364 միավոր /37.63 հա/ հողեր, որից Երևանում՝ 172 միավոր /14.15 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2357 միավոր /4650.48 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.06 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2622 միավոր /251.11 հա/, որից Երևանում՝ 351 միավոր /54.03 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1160 միավոր /108.81 հա/, որից Երևանում՝ 124 միավոր /23.91 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 67 միավոր /171.74 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /2.83 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 58 միավոր /43.40 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.20 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5830 միավորի /5071.41 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 465 միավոր /80.47 հա/, նվիրատվության գործարքներ՝ 392 միավորի /145.93 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /0.99 հա/ և փոխանակության գործարքներ՝ 44 միավորի /8.39 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /1.37 հա/:

Հանրապետությունում 2007թ. երրորդ եռամսյակում, 2006թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 32.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 18.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 42.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 17.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1985.81 հա, որից 1945.79 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 38.7% կամ 2254 գործարքներ /2873.83 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 139 գործարքներ /22.03 հա/, իսկ 61.0% կամ 3555 միավորը /2188.07 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 316 միավոր

/58.26 հա/: 2007թ.երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 21 գործարք /9.51 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	5	1.59	62	4.59	72	15.85	11	1.82	7	1.25	261	47.72	37	7.48
Արագածոտն	130	1038.58	3	1.29	11	1.51	54	3.25	158	204.68	0	0.00	194	18.86	10	0.12
Արարատ	104	206.09	11	2.49	115	10.16	89	2.55	206	97.88	0	0.00	264	22.79	8	0.84
Արմավիր	186	1115.61	7	0.28	31	2.24	58	1.98	297	830.18	2	0.09	428	34.55	17	0.88
Գեղարքունիք	29	42.34	1	0.75	43	6.72	78	9.98	60	64.64	0	0.00	36	5.63	8	1.03
Լոռի	13	27.57	1	0.06	47	3.35	93	6.23	118	224.17	5	138.07	34	3.34	23	1.36
Կոտայք	212	222.82	12	6.88	53	4.42	244	20.59	461	223.88	3	16.15	574	52.06	40	8.04
Շիրակ	18	16.62	2	0.75	72	2.19	55	2.83	52	61.52	1	0.03	17	0.90	15	0.82
Սյունիք	8	9.35	2	0.08	3	0.17	59	2.42	33	37.77	0	0.00	12	1.42	12	0.26
Վայոց Ձոր	15	28.22	0	0.00	6	0.75	46	2.23	22	45.76	0	0.00	15	1.43	5	1.01
Տավուշ	14	7.83	4	1.80	64	4.77	86	4.35	41	13.34	1	0.20	40	3.00	13	5.41
Ընդամենը	729	2715.03	48	15.97	507	40.87	934	72.26	1459	1805.64	19	155.79	1875	191.70	188	27.25

Ստորև ներկայացվում է 2007թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	96	13.69	5	1.59	29	1.46	62	10.64	43	8.34	0	0.00	0	0.00	33	3.13	10	5.21
Արագածոտն	12	0.19	0	0.00	0	0.00	12	0.19	186	1044.43	130	1038.58	3	1.29	11	1.51	42	3.05
Արարատ	20	0.09	0	0.00	1	0.01	19	0.08	298	201.20	103	186.09	11	2.49	114	10.15	70	2.47

Արմավիր	14	0.21	2	0.09	0	0.00	12	0.12	266	1119.49	184	1115.20	5	0.19	31	2.24	46	1.86
Գեղարքունիք	24	5.51	0	0.00	1	0.08	23	5.43	127	54.28	29	42.34	1	0.75	42	6.64	55	4.55
Լոռի	4	0.08	0	0.00	2	0.02	2	0.06	150	37.12	13	27.57	1	0.06	45	3.33	91	6.16
Կոտայք	35	8.89	4	5.84	10	0.72	21	2.33	485	243.82	211	220.82	8	1.04	43	3.70	223	18.26
Շիրակ	22	1.52	0	0.00	5	0.14	17	1.38	125	20.87	18	16.62	2	0.75	67	2.05	38	1.45
Սյունիք	8	0.72	0	0.00	1	0.09	7	0.63	64	11.30	8	9.35	2	0.08	2	0.08	52	1.79
Վայոց Ձոր	5	1.88	0	0.00	0	0.00	5	1.88	62	29.32	15	28.22	0	0.00	6	0.75	41	0.35
Տավուշ	64	2.45	2	1.78	14	0.55	48	0.12	103	16.15	13	7.67	2	0.02	50	4.22	38	4.24
Ընդամենը	304	35.23	13	9.30	63	3.07	228	22.86	1909	2786.32	724	2692.46	35	6.67	444	37.80	706	49.39

Հանրապետությունում 2007թ. երրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարքներ /22.58 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. երրորդ եռամսյակում, 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 36.2%-ով: Ընդ որում Երևանում աճել է 59.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 35.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 19.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 26.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 58.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.9 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների						Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների					
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին		
Արագածոտնի մարզ												
Աշտարակ	107	704.33	34.1	4400.0	396.4	112	162.73	362.2	6772.5	2706.4		
Ապարան	6	62.67	26.8	269.1	77.3	22	13.52	90.6	767.6	368.8		
Թալին	17	271.58	34.8	756.0	141.4	12	7.71	90.6	758.5	393.4		
Ծաղկահովիտ						10	18.95	77.0	948.2	172.3		
Արարատի մարզ												
Արտաշատ	68	54.18	34.8	2366.7	678.4	97	54.87	335.1	5418.0	1482.7		
Մասիս	16	29.17	32.5	1543.9	345.1	48	15.86	181.1	6772.5	1865.6		
Վեդի	19	102.75	31.7	633.5	217.9	60	26.93	203.8	4515.0	1265.0		
Արմավիրի մարզ												
Արմավիր	38	208.50	28.8	1059.2	93.9	76	241.06	294.3	4063.5	937.0		
Բաղրամյան	76	803.36	20.3	600.3	67.8	63	498.71	90.6	677.3	582.1		
Վաղարշապատ	70	103.34	29.9	879.9	263.8	151	86.53	443.7	9030.0	1590.1		
Գեղարքունիքի մարզ												
Գավառ	4	3.92	96.8	236.3	126.4	27	16.94	190.2	496.7	372.4		
Ճամբարակ	7	22.61	117.0	787.0	461.5	7	3.68	45.3	541.8	152.5		
Մարտունի	2	0.40	1155.0	2442.0	1798.5	5	1.52	45.3	1806.0	472.8		
Սևան	1	2.00	494.8	494.8	494.8	3	3.18	45.3	451.5	193.5		
Վարդենիս	15	13.40	223.5	700.0	392.8	18	39.33	27.2	532.8	250.4		
Լոռու մարզ												

Ալավերդի	2	0.14	375.0	660.0	517.5	57	24.39	163.0	2483.3	1087.5
Գուգարք	11	27.43	194.3	740.0	511.6	12	6.24	226.4	2709.0	941.7
Սպիտակ						4	0.78	226.4	1490.0	517.1
Ստեփանավան						26	149.23	90.6	2257.5	364.2
Տաշիր						13	33.50	45.3	451.5	207.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	95	75.08	36.8	5700.0	720.3	198	50.34	271.7	11287.5	3446.7
Եղվարդ	91	133.03	38.5	5571.4	503.8	209	131.00	172.1	11287.5	2419.7
Հրազդան	25	12.71	123.0	1525.0	437.2	45	39.79	113.2	2709.0	958.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	4.42	14.1	314.6	186.5	20	18.74	249.0	1693.1	454.5
Ամասիա						7	18.17	36.2	237.0	116.8
Անի						19	21.26	108.7	361.2	245.6
Աշոցք								45.3	165.0	116.8
Արթիկ	14	12.20	102.1	1741.2	397.1	5	2.42	63.4	1083.6	173.0
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.50	760.0	760.0	760.0	10	10.30	90.6	673.3	341.3
Կապան	4	6.85	180.0	194.1	183.5	2	2.27	54.3	841.6	226.4
Մեղրի						14	12.01	181.1	1784.2	494.6
Սիսիան	3	2.00	792.0	792.0	792.0	7	13.19	45.3	631.2	231.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	12	27.96	35.4	928.0	241.2	15	36.61	117.7	2524.8	1299.9
Վայք	3	0.26	46.1	299.4	203.8	7	9.15	54.3	1430.7	520.5
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	361.4	361.4	361.4	14	2.14	45.3	841.6	356.3
Իջևան	10	4.76	120.0	2331.0	565.1	9	4.82	240.0	1683.2	820.7
Նոյեմբերյան	2	2.71	217.7	407.5	312.6	17	6.27	45.3	3509.5	529.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերետը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	9	13100.0	174.5	179.0	176.9	176	156334.0	113.2	3612.0	2324.8
Ապարան	1	457.0	122.1	122.1	122.1	10	16050.0	113.2	632.1	195.9
Թալին	1	1500.0	113.7	113.7	113.7	8	16189.0	45.3	361.2	95.3
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	54	51120.0	113.8	430.0	241.1	70	70717.0	135.8	2709.0	894.1
Մասիս	52	46252.0	121.4	1741.7	438.5	155	113420.0	135.8	9030.0	1151.7
Վեդի	8	4154.5	410.0	1171.3	651.0	38	43321.0	113.2	993.3	647.7

Արմավիրի մարզ										
Արմավիր	4	3523.0	105.9	2061.8	1273.6	65	63394.0	135.8	2257.5	1096.7
Բաղրամյան						4	3540.0	81.5	270.9	132.3
Վարդարշապատ	27	18884.0	249.5	3828.0	3076.4	356	274721.0	135.8	4515.0	1456.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	16798.0	135.8	903.0	357.0
Ճամբարակ						5	7841.0	45.3	135.5	96.9
Մարտունի	39	64624.0	61.4	157.3	104.2	9	11350.0	90.6	451.5	238.2
Սևան	3	1800.0	188.1	434.8	311.5	6	7995.0	90.6	903.0	150.3
Վարդենիս						9	12269.0	45.3	225.8	109.6
Լոռու մարզ										
Ալավերդի						5	7000.0	67.9	270.9	126.0
Գուգարք	34	23399.0	144.0	10900.0	2997.7	19	15160.6	67.9	2347.8	546.9
Սյիտակ						4	4890.0	63.4	451.5	125.2
Ստեփանավան	11	9900.0	75.6	277.2	176.6	6	6345.0	45.3	270.9	104.3
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Արույան	15	15782.0	276.0	2325.0	1230.5	260	215924.7	135.8	6772.5	1775.5
Եղվարդ	21	15764.0	172.0	3234.0	1972.3	246	237962.0	135.8	6772.5	1905.7
Հրազդան	7	5430.0	145.0	9912.5	2712.3	62	60194.5	135.8	9030.0	1245.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	41	11652.0	126.0	11538.5	2289.6	8	2130.8	113.2	1535.1	326.4
Ամասիա						1	1000.0	45.3	135.5	68.5
Անի						4	3823.0	67.9	180.6	98.2
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	26	8847.0	52.5	900.0	244.1	4	2020.0	67.9	925.6	160.1
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	1200.0	1200.0	1200.0	2	1750.0	67.9	541.8	234.1
Կապան	1	220.0	5363.6	5363.6	5363.6	1	600.0	67.9	632.1	201.3
Մեղրի						5	5520.0	67.9	406.4	116.3
Սիսիան						4	6300.0	67.9	406.4	135.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	6	7500.0	113.5	376.2	220.2	11	9899.0	67.9	1128.8	290.5
Վայք						4	4400.0	77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ						2	96.0	45.3	632.1	85.7
Իջևան	49	42193.0	79.2	2200.0	1153.6	37	28909.0	67.9	1354.5	408.5
Նոյեմբերյան	1	32.0	446.6	446.6	446.6	1	1000.0	45.3	632.1	128.4

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 4 գործարքներ 0.25 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ Կոտայքի /0.10 հա/ և 1-ական՝ Գեղարքունիքի /0.05 հա/, Լոռվա /0.10 հա/ մարզերում:

2007թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2547 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.2%: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. երրորդ եռամսյակում 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.6%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 36.6%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխության շարժն ունի նվազման միտում:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 222 բնակարանների, 88 անհատական բնակելի տների, 823 հասարակական, 125 արտադրական նշանակության օբյեկտների, 1 այգետնակների, 1272 միավոր /4442.71 հա/ հողերի և 16 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 85 վարձակալության գործարքների, այդ թվում 55 միավոր /6.22 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 26.9%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 2.6 անգամ:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 4442.71 հա հողերից 11.91 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 4430.80 հա հողերի 3.30 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 13.37 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 1649.03 հա, որից 1598.00 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1686.49 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	2	320.00	37	85.46
Արարատ	4	32.00	25	48.50
Արմավիր	0	0.00	13	92.16
Գեղարքունիք	96	891.38	167	706.62
Լոռի	0	0.00	122	483.65
Կոտայք	0	0.00	45	82.14
Շիրակ	0	0.00	179	687.59
Սյունիք	6	217.27	15	331.26
Վայոց Ձոր	0	0.00	9	25.64
Տավուշ	2	225.84	22	43.99
Ընդամենը	110	1686.49	634	2587.01

2007թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6902 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.8%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.2%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 2.1 անգամ:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.6%/, առանձնատների /25.2%/, հասարակական

նշանակության օբյեկտների /9.9%/ և հողերի /10.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2836 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.2%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 66.8%-ով:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 2017.80 հա հողեր, որից 12.23 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 98.1% կամ 1979.25 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.10 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1043.79 հա, որից 1042.86 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 19 և 14 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 5.7%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 3.1%-ով: 2007թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է 21.2-ական% Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, իսկ ցածրը՝ 3.0% Վայոց Ձորի մարզում՝:

2007թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6917 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 15.9%-ով, իսկ 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 45.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.8%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /38.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն